ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/11-2 պայմանագրի շրջանակներում մատակարարված
<<Մեթիլցելյուլոզային վիսկոէլաստիկ լուծույթի>> հանրային հասկողության

22.06.2023թ. իրականացվել է ԳՎԲԿ-ԳՀԱՊՁԲ-23/11-2 պայմանագրի շրջանակներում մատակարարված <<Մեթիլցելյուլոզային վիսկոէլաստիկ լուծույթի>> հանրային հասկողություն, որի արդյունքում պարզվել է, որ մատակարարված ապրանքի որոշ տեխնիկական տվյալներ չէին համապատասխանում մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրերի պահանջներին, մասնավորապես՝

-բացակայում է քիմիական բաղադրության մի մասի վերաբերյալ տեղեկությունը
-միջին մոլեկուլյար զանգվածը
-մածուցիկությունը
-PH-ը
-պահպանման ջերմաստիճանը

Նշված անհամապատասխանութենների պատճառով տվել են բացասական եզրակացություն:

Համաձայն Գնումների մասին ՀՀ օրենքի 5.1 հոդվածի, <<Գավառի ԲԿ>> ՓԲԸ ստացված դիրքորոշումները քննարկել է՝ գործընթացին մասնակից դարձնելով նաև պայմանագրի կողմին, որն էլ գրավոր ներկայացրել է իր դիրքորոշումը մասնավորապես՝

1. Մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվում է, որ միջին մոլեկուլյար զանգվածը լինի **86,000 դալտոն**, իսկ մատակարարված ապրանքի մոլեկուլյար զանգվածը **80,000-100,000 դալտոն է:**
2. Մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվում է, որ **մածուցիկությունը 27°C պայմաններում լինի 3000 - 4500 mPa.s,** իսկ մատակարարված ապրանքի ներդիր թերթիկում նշված է **2500-5000 cps,** ինչը նշանակում է որ մատակարարված վիսկոէլաստիկի մածուցիկությունը համապատասխանում է մրցույթի պայմաններին և պահանջված առավելագույն շեմից բարձր է:
3. Մրցույթի հրավերի տեխնիկական բնութագրով պահանջվում է, որ **Ph-ը լինի Ph՝6.8- 7.6,** իսկ մատակարարված ապրանքի ներդիր թերթիկում նշված է **Ph 6.0-7.8**, ինչը նշանակում է որ մատակարարված վիսկոէլաստիկի Ph-ը պահանջված սահմաններին համապատասխանում է:

Մանրակրկիտ ուսումնասիրվել է ներդիր թերթիկն, որտեղ հստակ նշված է պահպանման ջերմային սահմանները տեղափոխման ժամանակ (**0-40°C**), իսկ **15-25°C** պահպանման օպտիմալ ջերմաստիճանն է:

Լրացուցիչ ներկայացրել է կազմի վկայագիր, ապրանքի նկարագրությունը:

Ամփոփելով բոլոր պարզաբանումները, <<Գավառի ԲԿ>> ՓԲԸ-ի ակնաբուժական ծառայության համար մատակարարված վիսկոէլաստիկ նյութի տեխնիկական բնութագիրը չի համապատասխանում նախօրոք նշված պահանջներին՝ պահպանման ջերմաստիճանով և մածուցիկությամբ:

<<Գավառի ԲԿ>> ՓԲԸ ակնաբուժական ծառայության ղեկավար՝ Հ. Հայրապետյան

Сканировано с CamScanner

Վիսկոէլաստիկ նյութը ըստ տեխնիկական բնութագրի չի համապատասխանում նախօրոք նշված պահանջներին՝ պահպանման ջերմաստիճանով և մածուցիկությամբ:

Ակնաբուժական ծառայության ղեկավար՝

Հ.Հայրապետյան

10.07.2023թ.

Сканировано с CamScanner